

# ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՄԱՐԴՈՒ ԻՆՔՆԻՐԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ  
ԱՆՁՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Այժմ, քան երբևէ, խիստ հրատապ է դարձել մարդու ներուճակ ուժերի իրացման հիմնահարցը: Սոցիալական կյանքի դինամիզմը, մարդկային կեցույթյան արագ փոփոխվող պայմաններն անընդհատ նոր պահանջներ են առաջադրում մարդուն՝ որպես պատմական պրոցեսի սուբյեկտի: Հասարակական առաջընթացն իր բոլոր շահանիշներով վերջին հաշվով որոշվում է մարդու առաջանցիկ զարգացման, նրա էությունական ուժերի իրացման աստիճանով: Այստեղ տեղին է հիշել մարդուն ուղղված Սոկրատեսի այն պատկերավոր խոսքը, որ եթե ուզում ես աշխարհը շարժել, նախ և առաջ ինքդ քեզ պետք է շարժես: Իրոք աշխարհը փոխվում է այնքանով, որքանով մարդն է փոխվում: Դա միասնական փոխպայմանավորված գործընթաց է: Մարդն օժտված է ներուճակ կենսական ուժերով: Դրանք ներկայացնում են նրա ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական կարողությունները, պահանջմունքները, զգացմունքները, կամքը, որոնց միջոցով նա հաստատում է իր ունիվերսալ հարաբերությունը արտաքին աշխարհի հետ: Այդ հարաբերությունները մարդը ճանաչում է արտաքին աշխարհը, վերափոխում ու արժեքավորում այն: Վերարտադրելով իր գոյության պայմանները՝ դրանով իսկ մարդը օբյեկտիվացնում, առարկայացնում է նաև իր էությունական ուժերը: Դա միաժամանակ մարդու էության սուբյեկտիվացում է, որն անմիջապես առնչվում է նրա ինքնագիտակցության, աշխարհայացքային-ճանաչողական կարողությունների զարգացման, սուբյեկտիվ-անձնային գործուն հատկությունների ձևավորման հետ: Դրանք ամբողջական ձևով արտահայտվում են մարդու ինքնիրացման ներքին պահանջմունքի մեջ: Այդ պահանջմունքը ձևավորվում և իրացվում է անհատական կեցույթյան մակարդակի վրա, բայց իր բնույթով և իրականացման պայմաններով հասարակական լայն դետերմինավորում ունի: Մարդու ռեալ կյանքը, նրա ներուճակ ուժերի իրացումը ընթանում է հասարակական հարաբերությունների յուրացման և վերարտադրության հետ զուգընթաց: Այստեղ մարդը այդ հարաբերությունների և՛ օբյեկտն է, և՛ սուբյեկտը, այսինքն՝ այդ պրոցեսի և՛ արդյունքը, և՛ ակտիվ գործող ռեալ ուժը: Ընդ որում, մարդու սուբյեկտիվ կարողությունների առարկայացումը՝ որպես ինքնիրացման պահանջմունքի բավարարում, տեղի է ունենում միայն նրա գոյության արտաքին օբյեկտիվ պայմանների հետ փոխներգործվելու ընթացքում, որի հիմքի վրա ձևավորվում է օբյեկտ-սուբյեկտ հարաբերությունների համակարգը՝ իր մարդկային ռեալ բովանդակություններ: Պետք է նշել նաև, որ ինքնիրացման պահանջմունքը թեև ձևավորման շարժառիթներով ավելի շատ սուբյեկտիվ է, բայց նաև օբյեկտիվ բընույթ ունի, այսինքն՝ այն չի առաջանում մաքուր գիտակցության ոլորտում,

այլ ծագում է մարդու կեցութեան համընդհանուր պայմաններից, նրա գոյութեան օրյեկտիվ աշխարհից, այդ աշխարհի նկատմամբ մարդու ճանաչողական, գործնական, հուզական, արժեքային հարաբերություններից: Իսկ մարդու ներունակ ուժերի իրացման պահանջմունքը իր սուբյեկտիվ-անձնային դրսևորումներով հանդես է գալիս անհատականացված ձևով և բնութագրվում այն բանով, թե ինչպես է այն գիտակցվում անհատական կեցութեան մակարդակով, դառնում գործունեության շարժառիթ, խթանում անձի սոցիալական ակտիվությունը: Մարդու այդ պահանջմունքների սուբյեկտիվությունը արտահայտվում է նաև անձի աշխարհայացքային, բարոյա-արժեքային, հոգեբանական բարդ ու հակասական կողմնորոշումների մեջ:

Մարդը, որպես կենսաբանական օրգանիզմ և սոցիալական էակ, կարող է գոյություն ունենալ և նորմալ գործառնել ոչ միայն արտաքին միջավայրի, այլև ինքնակարգավորման իր ներքին մեխանիզմների շնորհիվ: Ռուս ակադեմիկոս Ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովը նշել է, որ մարդը վերին աստիճանի ինքնակարգավորվող, ինքն իրեն աջակցող, իր զարգացմանը ուղղություն տվող և կատարելագործվող համակարգ է<sup>1</sup>: Այդպիսին է մարդն իր կենսաբանական հնարավորություններով, բայց այդ հատկություններով նա օժտված է առավել ևս որպես սոցիալական սուբյեկտ: Ավելին, մարդու այդ ընդունակությունները և հատկությունները արագ փոփոխվող բնական և սոցիալական միջավայրի պահանջներին համընթաց անընդհատ կատարելագործվում, նոր իմաստ ու որակ են ստանում, դառնում նրա անհատականության ձևավորման, սեփական «ես»-ի ինքնորոշման և իրացման պայմանը: Մարդու էութենական ուժերի առարկայացման բուն պրոցեսը օբյեկտիվ և սուբյեկտիվ որոշակի հարաբերակցությամբ դրսևորվում է որպես նրա անձնային բազմապիսի պահանջմունքների իրացման հարաճուն ընթացք: Այլ կերպ ասած, դա ոչ միայն որոշակի նյութական, հոգևոր, մշակութային, սոցիալ-բարոյական և այլ արժեքների յուրացման ու սպառման գործողություն է, այլև նոր պահանջմունքների ձևավորման ու վերարտադրության ակտիվ պրոցես: Ընդ որում, մարդու այդ գործունե ակտիվությունը, որի հիմքում ընկած է նրա ինքնիրացման պահանջմունքը, գիտակցված ու նպատակային ուղղվածություն է ստանում իրական և տեսլական ձևով: Իրականը արտահայտում է մարդու էության ռեալ պայմանների փոփոխությունների շփոթ և դրան համարժեք՝ մարդու հասունության աստիճանը՝ անձնային որոշակի արժեքներով ու հատկություններով: Իսկ տեսլականը մարդու անհատական կյանքի, նրա զարգացման հեռանկարի նպատակային մոդելացումն է: Մարդու կենսագործունեության այս երկու կողմերը փոխպայմանավորված են անմիջական և միջնորդավորված ձևով, անընդհատ փոխակերպվում և փոխանցվում են իրար՝ արտացոլելով նրա պահանջմունքների, ցանկությունների և դրանց իրացման հնարավորությունների միջև անընդհատ ծագող հակասությունները: Մարդու զարգացումը սահմա չունի: Դա սերնդափոխության անվերջ կրկնվող բնական պրոցես է, որտեղ նա գտնվում է լինելիության մշտական շարժման մեջ: Այդ ճանապարհին նրա ամեն մի ձեռքբերում ինքնակատարելագործման մի առաջընթաց է նշանավորում, դառնում նոր պահանջմունքների ձևավորման հիմք և ուրվագծում զարգացման մի նոր հեռանկար: Ամեն մի իդեալի իրականացում ծնում է նոր իդեալ, որն իր մեջ արտացոլում է մարդու՝ որպես սուբյեկտի առաջանցիկ զարգացման պահանջը: Ընդ որում, մարդու նպատակների, ցանկությունների և դրանց իրագործման հնարավորությունների միջև մշտապես առաջանում են անհամապատասխանություններ,

<sup>1</sup> Селу И. П. Павлов, Полн. собр. соч. т. III. кн. 2, М.—Л., 1951, էջ 188:

հակասություններ: Կյանքի նոր պայմանների ստեղծման և մարդկանց սուբ-  
 յեկտիվ ջանքերի շնորհիվ դրանք աստիճանաբար հաղթահարվում են, բայց  
 ոչ բացարձակապես, այլ հարաբերական առումով, քանի որ զարգացման  
 հաջորդ մակարդակի վրա դրանք նորից են առաջանում՝ փոխելով իրենց  
 դրսևորման ձևերը: Մարդը իր գործունեությամբ անընդհատ ձգտում է կր-  
 ճատել խզումը իր ցանկությունների ու հնարավորությունների միջև, բարձ-  
 րացնել իր գործադրած ջանքերի արդյունավետությունը: Իսկ դրա կարևոր  
 երաշխիքներից ամենահիմնականն այն է, թե առաջադրված նպատակները  
 ինչքանով են համապատասխանում մարդու պոտենցիալ հնարավորություն-  
 ներին և համարժեք դրանց իրացման համար մարդու գործադրած ջանքերին:  
 Դրա պայմաններից մեկը մարդու՝ իր սեփական ընդունակությունները օբ-  
 յեկտիվ գնահատելու կարողությունն է, որը սուբյեկտիվ-անձնային արժեք  
 ստանալով՝ կողմնորոշում է նրան իր նպատակների և իդեալների ճիշտ ընտ-  
 րության մեջ: Ինքնազարգացման, ինքնիրացման պահանջմունքը Հեգելը բը-  
 նութագրել է որպես մարդու «համընդհանուր և բացարձակ պահանջմունք»<sup>2</sup>:  
 Իսկ Մարքսը այն համարել է մարդու հարստության գլխավոր շահանիշը:  
 Նա նշել է, որ հարուստ մարդը նա է, որի մեջ իր սեփական իրականացումը  
 հանդես է գալիս որպես ներքին անհրաժեշտություն, ներքին պահանջմունք<sup>3</sup>:  
 Այդ պահանջմունքի առկայությամբ և նրա դրսևորման աստիճանով էլ բնու-  
 թագրվում է մարդը իբրև անձ և պատմական պրոցեսի ինքնահաստատվող  
 սուբյեկտ: Ինքնիրացման անձնային պահանջմունքի ձևավորումը որոշվում է  
 ինչպես հասարակական, այնպես էլ սուբյեկտիվ-անձնային շահերով ու  
 շարժառիթներով: Ընդ որում, ինքնիրացման սուբյեկտիվ-անձնային շարժա-  
 ռիթը ավելի բարդ ու հակասական է, քան նրա հասարակական դրդապատ-  
 ճառները, քանի որ այն ներառում է մարդու և նրա գոյության արտաքին  
 աշխարհի կապերը, միջանձնային հարաբերությունները՝ իրենց անհատական  
 առանձնահատկություններով, սուբյեկտիվ գնահատումներով ու դիրքորոշում-  
 ներով: Մարդու այդ պահանջմունքը միշտ վերընթաց զարգացման միտում  
 ունի: Մարդը մյուս կենդանիներից տարբերվում է հենց այն բանով, որ կա-  
 րողանում է անընդհատ ընդլայնել իր անհատական պահանջմունքների շըր-  
 ջանակները և մարդկայնացնել դրանք: Մարդու ինքնիրացման պահանջմուն-  
 քի ծագումը և իրականացումը հասարակական շահում ունեն: Բանն այն է,  
 որ մարդու անհատական պահանջմունքները ծագումնաբանական և ֆունկ-  
 ցիոնալ-գործառնական կապ ունեն հասարակական պահանջմունքների հետ:  
 Ամեն մի անհատական պահանջմունքի բավարարում նաև այս կամ այն հա-  
 սարակական պահանջմունքի իրացման պայման է դառնում: Անհատական  
 և հասարակական պահանջմունքների նման փոխապայմանավորվածությունը  
 նպաստում է անձի և հասարակության փոխհարաբերության կարգավորման  
 սոցիալական մեխանիզմի ձևավորմանը և ավելի նպատակասլաց ու արդյու-  
 նավետ դարձնում մարդու գործունեությունը: Այդ գործունեության սոցիա-  
 լական նշանակությունը ի հայտ է գալիս նաև այն բանում, որ նրա արդյուն-  
 քը ներառվում է հասարակական հարաբերությունների վերարտադրական  
 պրոցեսի մեջ և իր անձնային իմաստով օպտիմալ կապ հաստատում սոցիա-  
 լական համակարգի գործառնության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի միջև:  
 Այդ իմաստով ամեն մի հասարակական իդեալ պետք է շահվի նրանով, թե  
 ինչքանով է այն իր մեջ արտացոլում մարդու ընդունակությունների ազատ  
 զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման բուն պահանջը,

<sup>2</sup> Гегель. Эстетика: в 4-х т., М., т. 1, 1968, с. 37:

<sup>3</sup> Տե՛ս Կ. Մարքս, Վաղ շրջանի աշխատություններից, Երևան, 1956, էջ 586:

պահպանում դրա գերակայական նշանակութունը՝ իբրև առաջընթացի գրված խավոր շափանիշ: Մարդու անհատական կյանքը մարդկության ցեղային կյանքի, նրա զարգացման պատմական փուլի խտացված արտահայտությունն է, որը հանդես է գալիս տիպականի և անհատականի որոշակի հարաբերակցությամբ: Մարդու ցեղային կյանքը նույնպես նույն կարգով իր մեջ է առնում անհատական կյանքն իր բազմազան դրսևորումներով: Բայց մարդու կենսագործունեության մեջ անհատականը և հասարակականը, թեև մի օրգանական միասնություն են կազմում, այնուամենայնիվ ռեալ կեցության մեջ դրանք հանդես են գալիս իրենց յուրահատկություններով, անհատական կյանքը չի կարող ներառել ողջ հասարակականը, ինչպես նաև հասարակական կյանքը չի կարող ընդգրկել անհատական կյանքի բոլոր դրսևորումները: Ամեն մի առանձին մարդու կյանք տիպականացված ձևով իր մեջ կրում է հասարակական կյանքի միայն ընդհանրական գծերը, որոնք անհատականացված ձևով պայմանավորում են «հասարակական անհատի» ձևավորման օբյեկտիվ պահանջը: Այսինքն, այստեղ մենք գործ ունենք անձնական կյանքի սոցիալական արժեքավորման հետ, որի համար կարևոր է դառնում մարդու գործունեության ռեալ արդյունքը՝ իր սոցիալ-բարոյական որոշակի շափանիշներով, վարքագծային ու արժեքային կողմնորոշումներով: Ընդ որում, ինչքան բարձր է հասարակական հարաբերությունների անհատականացման մակարդակը, ինչքան լրիվ է բացահայտվում մարդկանց անհատական յուրահատկությունները, այնքան հասարակությունն ինքը դինամիկ զարգացման ավելի մեծ հնարավորություն է ստանում: Այդ դեպքում ավելի են ընդլայնվում նաև մարդու սուբյեկտիվ կարողությունների իրացման հնարավորությունները, որոնք իրենց անձնային արժեքներով ու օբյեկտիվացման արդյունքով առաջ են բերում ինքնաբավարարվածության ներքին զգացում ու դառնում նոր ավելի բարձր պահանջմունքների իրացման պայման:

Մարդու սոցիալական և անձնային առաջընթացի ամեն մի ձեռքբերում բխում է նրա պահանջմունքների բազմակողմանիությունից: Դա մարդու ներդաշնակ զարգացման օբյեկտիվ հիմքն է, որը փոխակերպվում է սուբյեկտիվ-անձնային պահանջմունքի և դառնում ինքնիրացման ներքին շարժառիթ: Այդ պահանջմունքների իրացման ռեալ ընթացք միաժամանակ դրանց կառուցվածքային փոփոխության պահանջ է առաջադրում: Դա մի կողմից իր մեջ արտացոլում է սոցիալական կյանքի հարաճուն փոփոխությունը, նրա դինամիզմը, իսկ մյուս կողմից, ամրապնդում մարդու տարբեր պահանջմունքների միջև եղած ներքին կապերը: Այդ գործընթացն իրար է միահյուսում պահանջմունքների իրացման անձնային շարժառիթներն ու հասարակական պահանջարկը: Հասարակական կյանքի հարաճուն ընթացքը անընդհատ մարդուն նոր պահանջներ է առաջադրում, ձևավորում մարդկային որակների որոշակի սոցիալական պատվեր: Պատմության օբյեկտիվ ընթացքով առաջադրված խնդիրների լուծումը ինքնին ենթադրում է դրանց համապատասխան մարդկային անհրաժեշտ ընդունակություններ: Ընդ որում, մարդկային այս կամ այն որակի, ընդունակության հանդեպ եղած հասարակական պահանջարկի առկայությունը ենթադրում է նաև առաջադրված անհրաժեշտություն: Դրանք իրար հետ փոխպայմանավորված են և հանդես են գալիս միասնաբար: Եթե խախտվում է պահանջարկի և առաջարկի օպտիմալ հարաբերակցությունը, շուկայական հարաբերությունների օրենքի կարգով տեղի է ունենում մարդկային այս կամ այն որակի «գնի» բարձրացում կամ «արժեզրկում»: Հասարակական նոր պահանջները, նոր խնդիրները առաջ են բերում վերաորակավորվելու, վերակողմնորոշվելու, գործունեության

բնույթը փոխելու և նոր բնագավառ ընտրելու անհրաժեշտություն: Այս պայմաններում առաջ է գալիս նաև արժեքների վերաարժեքավորման պահանջ, նոր կողմնորոշումներ՝ հասարակական և անձնական կյանքի մակարդակով: ԾՅԵ հասարակության համար առաջնային է դառնում «հացի խնդիրը», ապա նրա համար գերակայական նշանակություն է ստանում գոյատևման նյութական միջոցների ապահովման հարցը: Հետևաբար նա չի կարող ունենալ ինտելեկտուալ, հոգևոր-մշակութային արժեքների սպառման բարձր մակարդակ: Այս դեպքում այդ արժեքները մարմնավորող մարդկային ընդունակությունները որոշակի իմաստով կոնսերվացվում են կամ էլ իրացման այլ ելք որոնում: Վերակողմնորոշման նման շրջադարձերը մարդկանց մոտ ստեղծում են ներքին լարվածություն, նոր կողմնորոշման դժվարություններ: Այս հանգամանքն անշուշտ իր բացասական ազդեցությունն է ունենում նաև հասարակության բնականոն զարգացման ընթացքի վրա: Սոցիալական համակարգը կարող է նորմալ գործառնել և զարգացման իր պահանջմունքները բավարարել միայն մարդկային բազմազան ընդունակությունների իրացման շնորհիվ, որը տեղի է ունենում բազմազան պրոֆեսիաների շրջանակներում: Հենց իր շահերից ելնելով՝ ամեն մի հասարակություն պետք է նպաստավոր պայմաններ ստեղծի մարդկանց ստեղծագործական բազմակողմանի կարողությունների ազատ զարգացման համար: Ըստ որում, մարդու՝ նման զարգացման հասարակական պահանջարկը իր հիմքում պետք է ունենա նրա ներդաշնակ զարգացման իդեալը, որպես հասարակական առաջընթացի հումանիստական ուղղվածության ապահովում: ԾՅԵ հասարակությունը մարդկային որակների գնահատման մեջ ելնում է միայն նրա պրոֆեսիոնալ օգտակարության շահերից՝ առավելապես իբրև սոսկ արտադրողական ուժի, անտեսելով նրա կյանքի ու պահանջմունքների մյուս ոլորտները, ապա դրանով իսկ մասնատվում է մարդու ամբողջական կյանքը, թուլանում են նրա ինքնազարգացման սուբյեկտիվ-անձնային խթանները, սոցիալական ակտիվության շարժառիթները: Մարդու ինքնազարգացումը սեփական ջանքերի արդյունք է: Դրանով է նա իրեն հաստատում որպես հասարակական հարաբերությունների և իր իսկ վերարտադրության պրոցեսի սուբյեկտ: Այս դեպքում մարդու ինքնիրացումը տեղի է ունենում անձնային ներքին պահանջմունքով ու մղումով, որի շնորհիվ նա հաստատում է իր ինքնությունը ոչ միայն որպես մասնավոր անձ, այլ նաև իբրև իր մեջ սոցիալական ու բարոյական արժեքներ կրող անհատականություն: Ինքնին հասկանալի է, որ առանց արտաքին օբյեկտիվ պայմանների մարդը չի կարող զարգացնել իր սուբյեկտիվ ընդունակությունները, իրացնել իր բազմակողմանի պահանջմունքները: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ միայն դրանց սոսկ առկայությունը դեռ բավական չէ, որպեսզի մարդը կարողանա ազատորեն դրսևորել իր հնարավորություններն ու կարողությունները: Դրանք մեծապես պայմանավորված են մարդու անձնային առանձնահատկություններով, ինքնագիտակցության աստիճանով, կամքի ուժով, ներքին ակտիվությամբ և այլ սուբյեկտիվ հատկություններով: Մարդու էությունը բացահայտվում և առարկայանում է նրա անհատական կեցության և գոյության բուն պրոցեսում: Գոյատևել, մարդու համար նշանակում է գործել, շարժման մեջ լինել, ներքին ներունակ ուժերի օբյեկտիվացման ու սուբյեկտիվացման միջոցով ինքնաառեղծ պրոցես ապրել: Այդ ճանապարհով մարդը մի կողմից վերարտադրում է իր գոյության արտաքին պայմանները, իսկ մյուս կողմից իր մեջ ձևավորում անձնային որոշակի հատկություններ: Որպես ինքնահաստատվող «ես», անձ ու անհատականություն՝ նա գործում է իբրև «ինքնավար» սուբյեկտ, միշտ ձգտում է պահպանել իր անկախությունը, ազատվել իր ազա-

տությունը սահմանափակող, իր կամքի վրա բռնացող արտաքին հանգամանքներից: Մյուս կողմից մարդը չի կարող լինվին ազատ լինել արտաքին միջավայրի ազդեցությունից, որը այսպես թե այնպես որոշակի շրջանակների մեջ է առնում մարդու ազատությունը: Ինքնուրույնության դրսևորումը առավել նշանակալից է դառնում, երբ խոսքը վերաբերում է ներքին հոգեվոր ինքնուրույնությանն ու անկախությանը, նրա մտածողության ոլորտին, կյանքի տարբեր երևույթների նկատմամբ ունեցած գնահատումներին, դիրքորոշումներին, զգացմունքներին: Դա ներկայացնում է սոցիալական միջավայրի ու անձի փոխհարաբերության, նրա սուբյեկտիվ ընկալումների ավելի բարդ ու հակասական կողմը: Մարդու գոյության հասարակական միջավայրը, մարդկանց համատեղ գործունեության հավաքական արդյունքը լինելով հանդերձ, ներկայանում է անհատականացված ձևով: Այդ իմաստով նա չի կարող ամեն մեկի զարգացման համար համարժեք շահանիշ լինել: Արտաքին պայմանները իրենց կոնկրետ դրսևորումներով սահմանում են մարդու զարգացման օբյեկտիվ հնարավորությունները, իսկ ընձեռած հնարավորություններից օգտվելու շահը գլխավորապես որոշվում է յուրաքանչյուրի անհատական սուբյեկտիվ կարողություններով: Դա պայմանավորված է նաև նրանով, թե հասարակական հարաբերությունների բարդ համակարգում ինչպես է կողմնորոշվում մարդը, ինչ արժեքներ են նրա համար դառնում գերակայական, և ինչի վրա է ծախսում իր ներուժը: Դրանով որոշվում է նաև մարդու անձնային հատկանիշների ձևավորման, ինչպես նաև նրա վրա միջավայրի ունեցած ազդեցության ուղղվածությունը, որը միշտ ուղեկցվում է անհատական ու հասարակական կյանքի միջև մշտապես ծագող հակասություններով: Ունենալով արժեքային որոշակի կողմնորոշումներ և իդեալ, անձն իր լինելիության ռեալ շարժման մեջ ձգտում է հաղթահարել այդ հակասությունները, ընդլայնել իր կենսագործունեության սոցիալական տարածությունները, իրացնել իր անհատական պահանջմունքները: Այդ գործունեության ընթացքում այսպես թե այնպես նա իր անձնական պահանջմունքները և նպատակները համադրում է հասարակական պահանջմունքների ու նպատակների հետ: Ինչպես արդեն վերը նշեցինք, մարդու կենսագործունեության պրոցեսում անհատականը և հասարակականը թեև իրենց ծագումնաբանական ու ֆունկցիոնալ-գործառնական կապերով մի միասնություն են կազմում, այնուամենայնիվ նրանք չեն կորցնում իրենց յուրահատկությունները: Հասարակական կյանքը, որպես ամբողջական կազմավորում, ունի գոյության ու զարգացման իր օրենքները, համընդհանուր պայմանները: Առաջընթացի իր պահանջմունքներից ելնելով՝ հասարակությունը ժամանակ առ ժամանակ փոխում է իր արժեքային կողմնորոշումները, ստեղծում նորացման ու ինքնակարգավորման նոր մեխանիզմներ: Տվյալ դեպքում ամբողջի շահը գերակայական նշանակություն է ձեռք բերում առանձին անհատի շահի հանդեպ: Իսկ դա անհատական կեցության մակարդակով այսպես թե այնպես սահմանափակում է մարդու պոտենցիալ հնարավորությունների ազատ իրացումը: Այս հակասությունն անխուսափելի է. դա պատմական պրոցեսի ներքին օրինաչափությունից է բխում: Հասարակական և անհատական շահի միջև չի կարող ստեղծվել լիակատար ներդաշնակություն: Ամեն մի հասարակություն ձգտում է դրան, բայց դա կլինի անհասանելի իդեալ, ավարտ չունեցող խնդիր: Մարդը ձգտում է կատարելության, բայց միշտ հետ է մնում հասարակության զարգացման պահանջներից, այս անհամապատասխանությունն առաջ է բերում հոգեկան ներքին լարվածություն, որն իր կնիքն է դնում մարդու անձնական կյանքի վրա: Անհատական կեցության մակարդակով մարդու մոտ այդ լարվածությունն առաջ է գալիս նաև

այն դեպքում, երբ հասարակությունն ինքը հնարավորություն չի ընձեռում մարդու պոտենցիալ հնարավորությունների ազատ զարգացման համար:

Բնությունը մարդկանց օժտելով որոշակի ընդունակություններով, ինտելեկտուալ, հոգևոր, հուզական կարողություններով, միշտ առատաձեռն է եղել, ստեղծել է նաև «պահեստային ուժեր», հաշվի առնելով և կանխատեսելով իր գոյատևման ճանապարհին հասարակության կրած անխուսափելի կորուստների հատուցման անհրաժեշտությունը: Բնական աղետները, պատերազմները, համաճարակները, սոցիալական և ազգամիջյան կոնֆլիկտները, որոնք ուղեկցում են մարդկությանը, և որոնցից նա դեռ չի կարողանում խուսափել, նրանից խլում են ոչ միայն նյութական արժեքներ, այլև ինտելեկտուալ, հոգևոր մեծ ներուժ: Դա խախտում է հասարակության գործառնության բնականոն ընթացքը և իր հետքը թողնում նրա հետագա զարգացման վրա: Այս պարագայում հասարակությունը գործի է դնում իր ներքին «պահեստային» կենսական ուժերը, ձգտում է ռացիոնալ օգտագործել դրանք և կրած վնասը հատուցելով՝ վերականգնել իր հավասարակշռությունը, վերարտադրել իր հետագա գոյության և առաջընթացի համար անհրաժեշտ նոր պայմաններ: Մարդկությունը գոյատևում և զարգանում է բնական և սոցիալական տարածության մեջ: Այս տարածություններն անընդհատ յուրացվում և վերարտադրվում են: Դա անվերջ պրոցես է, որը հնարավոր չէ կասեցնել: Հասարակության զարգացման պրոցեսում իրենց խաղացած դերով բնական և սոցիալական պայմանները որակապես տարբերվում են իրարից: Նախ բնությունը միայն զուտ բնական գործոնի դեր չի կատարում, մարդկանց վերափոխիչ գործունեության շնորհիվ այն սոցիալիզացիայի է ենթարկվում, պահպանելով միաժամանակ իր որակական տարբերությունը՝ հասարակության զարգացման սոցիալական գործոնների հանդեպ, որը լայն առումով արտահայտվում է «երկրորդ բնություն» հասկացությամբ: Երկրորդ բնությունը, որպես հասարակության զարգացման բնական հիմք, սոցիալական տարածության նման անընդհատ վերարտադրվելու և ընդլայնվելու հնարավորություն ունի: Դա պետք է հասկանալ երկու իմաստով. նախ՝ «երկրորդ բնություն» ստեղծելու և այն անընդհատ զարգացնելու, և երկրորդ՝ մարդկության գոյության համար բնական նոր տարածքներ յուրացնելու առումով: Եթե մի պահ պատկերացնենք, որ մեր երկիր մոլորակի բնական տարածքը այլևս չի բավարարում մարդկությանը, պետք է ենթադրել, որ նա անպայման իր գոյության համար նոր կենսատարածքներ կգտնի ուրիշ մոլորակների վրա, և այնտեղ կշարունակվի կյանքը: Մարդկությունը արդեն մտածում է այդ ուղղությամբ, տիեզերքի նվաճումը հեռանկարում նաև այդ նպատակն է հետապնդում: Սոցիալական տարածության յուրացումն ու ընդլայնումն իր յուրահատկություններով, օբյեկտիվ և սուբյեկտիվ կարգի արտաքին և ներքին փոխազդեցություններով ավելի բարդ պրոցես է: Սոցիալական տարածությունն իր մեջ ներառում է բնական տարբեր տարածքներում ապրող, զարգացման տարբեր մակարդակի վրա գտնվող մարդկային ցեղեր, ազգություններ, ազգեր՝ իրենց մշակույթի, սովորույթների, ավանդույթների առանձնահատկություններով: Սոցիալական տարածության յուրացումը ենթադրում է մարդկությունը կազմող այդ պատմական, սոցիալ-էթնիկական հանրությունների ստեղծած մշակույթի, զարգացման պատմական փորձի, համակցության, հաղորդակցման ձևերի ու եղանակների ժառանգում և յուրացում, որը ուղեկցվում է դրանց մշտական փոխհարստացմամբ և վերարտադրությամբ: Այս ճանապարհով ի մի է բերվում մարդկության ապրած պատմական փորձը, որն իր մեջ միավորում և սինթեզում է կոլեկտիվ բնականությունը, տարբեր ժողովուրդների ազգերի մշակույթը՝ որպես հա-

մամարդկային արժեք: Դա մարդկության ինքնակատարելագործման բնական պրոցես է, որը տեղի է ունենում ամբողջի և նրա մեջ ներառված ամեն մի առանձին ներուճակ ուժերի զարգացման փոխներգործությամբ: Ճիշտ է ասված, որ մարդկային կեցության ցանկացած բնագավառ գործառնում է տարբերակված միասնության հիմքի վրա: Այս դեպքում, նշում է Թեյար դե Շարդենը, մասերը կատարելագործվում և իրենց ավարտին են հասնում ամեն մի կազմակերպված ամբողջի մեջ: Անտեսելով այս ունիվերսալ կանոնը՝ պանթեիզմը բազմաթիվ անգամ մեզ մոլորության մեջ գցեց մեկ ամբողջի պաշտամունքով, որի մեջ անհատները կորչում են որպես ջրի կաթիլ, տարալուծվում որպես աղի հատիկ, փշրանք ծովի մեջ: Միավորվելու օրենքը մեզ ազատում է այդ վտանգավոր և միշտ վերածնվող պատրանքներից: Սոցիալական տարածությունն անընդհատ վերարտադրվում ու ընդլայնվում է: Այդ վերարտադրական պրոցեսի մեջ են ներառվում նյութական հոգևոր ու սոցիալ-բարոյական արժեքներ, ինքը՝ մարդը, որպես ֆիզիկական, սոցիալական, հոգևոր անձ: Սոցիալական տարածության վերարտադրությունը ներկայանում է նաև որպես ազգաբնակչության վերարտադրություն՝ իր քանակական ու որակական չափանիշներով: Հասարակությունն իր խնդիրները լուծում է և՛ մարդկային քանակով, և՛ մարդկային որակով: Ի դեպ, նշենք, որ մարդկային քանակի և որակի հարաբերակցության հարցը վերը նշված տեսանկյունով տակավին չուսումնասիրված լուրջ պրոբլեմ է և առանձին հետազոտման կարիք ունի:

Մարդկանց հակումներն ու պահանջմունքները բազմակողմանի են. դրանով էլ պայմանավորված է նաև նրա գործունեության բազմազանությունը և ամբողջական զարգացման հնարավորությունը: Ըստ որում, այդ հնարավորությունը կարելի է իրականացնել միայն մարդու առօրեական-կենցաղային պահանջմունքների բավարարման անհրաժեշտ մակարդակի հիմքի վրա: Մարդու զարգացման ավելի բարձր պահանջմունքները որոշվում են ամենից առաջ նրա պրոֆեսիոնալ, ընդհանուր կուլտուրական մակարդակով, նրա աշխարհայացքային ու բարոյա-արժեքային ըմբռնումների ու դիրքորոշումների աստիճանով, այն բանով, թե մարդն ինչքանով է դարձել պատմական պրոցեսի գործունյա սուբյեկտ: Անձնային այս հատկանիշների ձևավորման բուն գործընթացը տեղի է ունենում հասարակական և անձնային շարժառիթների փոխներգործությամբ: Մարդու կարողությունների բազմակողմանի զարգացումը սոցիալական ամբողջի կողմից ընկալվում է որպես իր նորմալ գործառնության անհրաժեշտություն: Այս դեպքում անձի դարգացման հասարակական անհրաժեշտությունը սուբյեկտիվ-անձնային իմաստ ստանալով, նույնպես ազատ ծավալման ասպարեզ է գտնում: Անձի կայացման, նրա ներքին ուժերի օբյեկտիվացման և սուբյեկտիվացման ոճալ ընթացքը միշտ տեղի է ունենում ընդհանուրի և եզակիի, տիպականի և անհատականի համադրությամբ: Մարդն իր գոյության ընթացքում ձգտում է որոշել իր տեղը շրջապատող աշխարհում, ճանաչել այդ աշխարհը, ըմբռնել և գնահատել կյանքի իմաստն ու արժեքները, սահմանել զրանց հասու լինելու միջոցները: Տվյալ դեպքում մարդը այսպես թե այնպես օբյեկտիվորեն կանգնում է իր անհատական նեղ կյանքը հաղթահարելու, հասարակական ավելի լայն կապերի ու հարաբերությունների մեջ մտնելու, համամարդկային արժեքներին հաղորդակցվելու պահանջի առջև: Մարդկային ամեն մի սերունդ պետք է յուրացնի ու ժառանգի իր ցեղի զարգացման ընդհանրական փորձը: Մարդկանց համատեղ կեցության փորձի կուտակումը և

<sup>4</sup> Сб. «Тейар де Шарден, Феномен человека». М., 1987, էջ 201:

փոխանցումը, դրա անհատականացումը նպաստում է մարդու պահանջմունքների բոլոր բաղադրատարրերի ներքին կապերի ամրապնդմանը, դրանց իրացման սոցիալական ու անձնային մեխանիզմների արդյունավետ գործառմանը: Այս առնչությամբ խիստ կարևորվում է խելացի պահանջմունքների դաստիարակության, դրանց մարդկայնացման հիմնահարցը: Խելացի են մարդու այն պահանջմունքները, որոնք ապահովում են նրա նորմալ գործառնությունը որպես ակտիվ գործող սուբյեկտի և շեն հակասում հասարակական պահանջմունքներին: Դա իր հերթին ենթադրում է պահանջմունքների իրացման տնտեսական, սոցիալական, հոգևոր, օբյեկտիվ հիմքերին համարժեք մարդու էություն սուբյեկտիվացման որոշակի մակարդակի առկայություն: Այդ մակարդակը որոշվում է մարդու կենսագործունեության սոցիալական միջավայրի, դաստիարակության և ինքնադաստիարակության փոխներգործության աստիճանով, որը պետք է համապատասխանություն հաստատի անձի ինքնիրացման պահանջմունքների և դրանց բավարարման օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների միջև: Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ մարդու կենսագործունեության նշված կողմերի միջև եղած համապատասխանությունը հարաբերական է: Դա միշտ խախտվում է և երբեմն հանդես գալիս խոր հակասությունների և կոնֆլիկտների ձևով: Դա բնական ու անխուսափելի է, քանի որ զարգացման գործընթացն ապահովվում է հենց այդ հակասությունների, կոնֆլիկտների հաղթահարման շնորհիվ: Որպես կանոն հասարակության զարգացման ամեն մի ձեռք բերված մակարդակ բավարարելով մարդու այս կամ այն պահանջմունքը, փոխելով նրա կեցության պայմանները, նոր պահանջմունքների ձևավորման հիմք է դնում: Մարդու կենսագործունեության արտաքին միջավայրի փոփոխությունը ներառում է նաև մարդու նոր պահանջմունքների իրացման սոցիալական մեխանիզմների ամբողջական վերարտադրությունը: Այդ մեխանիզմները պետք է ապահովեն մարդու արդյունավետ գործունեությունը հասարակական հարաբերությունների համակարգում՝ որպես ամբողջական սոցիալական էակ, ընդլայնելով դրա համար անհրաժեշտ նյութական, հոգևոր, իրավական, բարոյական պայմաններ: Դա պահանջում է հասարակության սոցիալական կառուցվածքի անընդհատ կատարելագործում, հասարակության բոլոր անդամների համար ազատ ինքնարտահայտման պայմանների ստեղծում: Այս դեպքում մարդը, իր վրա վերցնելով սոցիալական որոշակի դերեր, դառնում է ոչ միայն իր գոյության միջոցների, այլև իր իսկ վերարտադրության իրական սուբյեկտը, որպես ամբողջական համակարգ: Այլ կերպ չի էլ կարող լինել, քանի որ մարդը հասարակական հարաբերությունների մեջ է ներառված բազմակողմանի դերային ֆունկցիոնալ կապերով և նույնիսկ այդ հարաբերությունների անհատականացման մակարդակով նա չի կորցնում այդ ամբողջականությունը: Դա հասարակական կյանքի վերարտադրական պրոցեսի օրինաչափ արդյունքն է: Հասարակական արտադրությունը իր ամբողջական արդյունքով չի սահմանափակվում միայն նյութական կամ հոգևոր արժեքներով, այն միաժամանակ մարդկային ռեալ բովանդակություն ունի, այսինքն՝ այդ պրոցեսը նաև մարդկային նոր հատկությունների ու ընդունակությունների ձևավորում և զարգացում է ենթադրում: Բայց և այնպես մարդը ինքնավերարտադրության պրոցեսում երբեք չի հասնում իր ներուժակ հնարավորությունների իրացման վերջին սահմանին: Այդ անհամապատասխանությունը պահպանվում է և՛ անհատական կյանքի, և՛ սերնդափոխության շրջանակներում: Բայց որպես սոցիալական էվոլյուցիայի համընդհանուր օրենք՝ հասարակությունը միշտ ունենում է մարդու հարաճուն, ավելի բարձր զարգացման սոցիալական պատվեր, որը իրացվում է սերնդափոխության

բնական ընթացքով: Դրանով է ապահովվում մարդկային պատմության ներքին կապն ու անընդհատությունը: Այն, որ իր անհատական կյանքի ընթացքում մարդն իր ներունակ ուժերին համարժեք իրեն լիովին չի իրացնում, ընդհանուր օրինաչափություն է: Բայց օրինաչափություն է նաև այն, որ տարբեր մարդկանց մոտ դա տարբեր չափով է արտահայտվում: Առանձին անհատներ կարող են նույնիսկ իրենք իրենց «գերազանցել», բայց դա ավելի շուտ բացառություն է, քան օրինաչափություն: Ճշմարտությունն այն է, որ հանճարներն անգամ լրիվ չեն իրացնում իրենց: Նույնիսկ կարելի է ասել, որ դա ավելի բարդ խնդիր է հանճարների համար, քան սովորական մահկանացուների: Այդ հողի վրա նրանցից շատերի կյանքը ողբերգական վախճան է ունենում: Ինչ վերաբերում է մարդու բնածին-անհատական ընդունակությունների իրացման չափին ու մակարդակին, ապա դա մի կողմից պայմանավորված է արտաքին օբյեկտիվ հանգամանքներով, դրա համար անհրաժեշտ պայմանների առկայությամբ կամ բացակայությամբ, մյուս կողմից՝ մարդու անհատական առանձնահատկություններով և ընդունակություններով: Այստեղ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ նույնիսկ ծագումնաբանական առումով մարդու ներունակ ընդունակությունները մեկընդմիջտ նրան ի ծնե չեն տրվում: Բացահայտելով իր ներքին հնարավորությունները կյանքի նոր պահանջներին համընթաց՝ նա ձեռք է բերում նոր ընդունակություններ, սոցիալական ու անձնային նոր որակներ: Այդ ճանապարհին նա կարող է կորցնել նաև ձեռքբերածը: Այս պրոցեսն ընթանում է մարդու իղբալի և նրա իրականացման ոեալ պայմանների հարաբերակցության մշտական փոփոխությամբ: Սոցիալական իրականության հարաճուն փոփոխության պարտադրանքով մարդը ճշտում է իր նպատակային կողմնորոշումները, այն համադրում նրան ներկայացվող հասարակական նոր պահանջների հետ: Արտաքին աշխարհի հետ փոխադարձ կապի մեջ մարդը գիտակցում է նաև, որ ինքը նույնպես այդ օբյեկտիվ աշխարհի անհրաժեշտ բաղադրատարրն է: Այս ամենի շնորհիվ մարդը կարողանում է ճիշտ գնահատել նաև իր ներքին պոտենցիալ հնարավորությունների, դրանց իրացման օբյեկտիվ և սուբյեկտիվ կապերի հարաբերակցության օպտիմալ շափը, դրանց մեկը մյուսին փոխարկվելու մեխանիզմները:

Պատմական պրոցեսը իր մեջ ներառում է օբյեկտիվ և սուբյեկտիվ կարգի բազմաթիվ գործոններ, որոնք որոշակի համամասնությամբ ու փոխներգործությամբ պայմանավորում են մարդու գործառնության և պահանջմունքների իրացման փոխադարձ կապը, կանխանշում հասարակական առաջընթացի ուղղվածությունը, նրա ընդհանուր միտումները: Այստեղ միահյուսված ձևով հանդես են գալիս և գիտակցականը, և տարերայինը: Հասարակական և անհատական կյանքում սպասվող փոփոխությունները հնարավոր չէ նախօրոք կանխատեսել, կարելի է կոահումներ անել, լինել ճիշտ կամ սխալ, բայց բոլոր դեպքերում այստեղ միշտ առկա է տարերայնության մոմենտը: Այնուամենայնիվ պատմական պրոցեսն ունի զարգացման իր ներքին տրամաբանությունը, օբյեկտիվ օրինաչափությունները: Հասարակական կյանքը հենց նրանով է տարբերվում բնական պրոցեսներից, որ ինքնակարգավորման ներքին ընդունակություններ ու մեխանիզմներ ունի, հետևաբար կարող է որոշել իր առաջընթացի հեռանկարային կողմնորոշումները: Ընդ որում, պետք է հաշվի առնել նաև այն, որ մարդու և նրա կենսագործունեության արտաքին միջավայրի ու պայմանների փոխհարաբերությունը գնալով ավելի շատ միջնորդավորված բույթ է ստանում, քան անմիջական: Եվ դա դժվարացնում է ապագայի կանխատեսման մանրամասնությունների մշակումը, ավելի հեռու ապագայի «պլանավորում»: Սոցիալական կյանքի դե-

նամիզմը, նրա միջնորդավորվածությունն ու բարդացումը, իրավիճակների արագ փոփոխությունները ստիպում են ընտրել արագ հատուցվող ծրագրեր ու նպատակներ: Կանխատեսման պրակտիկայի մեջ թերևս ամենադժվար խնդիրը մարդու կենսագործունեության տարբեր ոլորտներում կատարվող և իրար հետ փոխներգործվող պայմանների փոփոխության հետևանքների կանխատեսումն է: Ըստ որում, խնդիրն ավելի է բարդանում, երբ դա վերաբերում է մարդու գիտակցությանը, ինքնագիտակցությանը, հոգեբանությանը, համոզմունքներին, հավատին, աշխարհայացքին և արժեքային կողմնորոշումներին: Բանն այն է, որ այստեղ կատարվող փոփոխությունները անմիջապես չեն ընկալվում, դրանք մարդկային ոեալ հարաբերությունների մեջ ինտեգրվում, միավորվում են և հավաքական արդյունքի ձևով կազմավորում են այն հոգևոր ու բարոյական մթնոլորտը, որ անմիջական թե միջնորդավորված ձևով ազդում է մարդու վարքագծի, նրա արժեքային կողմնորոշումների վրա, դրանով իսկ կարգավորում նաև անհատական զարգացման բուն ընթացքը: Կարգավորել՝ չի նշանակում, որ պետք է կանոնակարգել և հսկողության տակ առնել մարդու բոլոր գործողությունները: Այդպես վարվել՝ նշանակում է նրան զրկել իր իսկ էությունից բխող ազատ ինքնարտահայտման հնարավորությունից: Դա էլ այն դեպքում, երբ այժմ անձը գնալով ձգտում է ավելի մեծ անկախություն և ազատություն ստանալ սոցիումից, հանրությունից: Դրանով նա իր վրա է վերցնում սեփական «ես»-ի կայացման, անձնական կյանքի պրոբլեմների լուծման պատասխանատվությունը: Դա մարդու անհատականության զարգացման կարևոր շափանիչ է: Մարդկային տեսակի իրական պրոբլեմը նրա էվոլյուցիայի արդի փուլում այն է, ինչպես իրավացիորեն նշում է Ա. Պեչեֆին, որ նա անընդունակ է դարձել կուլտուրական տեսակետից համաշափ քայլել և լիովին հարմարվել այն փոփոխություններին, որոնք կատարվել են նրա իսկ կողմից իրեն շրջապատող աշխարհում: Եվ քանի որ նրա զարգացման տվյալ կրիտիկական պահին առաջացած պրոբլեմը գտնվում է մարդկային էակի ներսում, այլ ոչ թե դրսում՝ վերցրած ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ մակարդակի վրա, ապա նրա լուծումը նույնպես պետք է բխի ամենից առաջ և գլխավորապես նրա իսկ ներսից: Պրոբլեմն արդյունքում հանգում է մարդկային որակներին և նրանց կատարելագործման ուղիներին: Ուրեմն արտաքին ոչ մի հանգամանք մարդուն չի կարող փրկել, եթե նա ինքը չփոխի իր սովորույթները, բարքերը, վարքագիծը և այլն<sup>5</sup>: Այստեղ խոսքն այն մասին է, թե ինչքանով է մարդուն հաջողվում իր մոտ ձևավորել հասարակության կողմից նրան ներկայացվող պահանջներին համարժեք անձնային որակներ և ապահովել դրանց օպտիմալ գործառնությունը: Մարդը պետք է հաղթահարի իր սահմանափակությունը, ինչ-որ տեղ վեր բարձրանա իր գոյությունը պայմանավորող սոցիալական միջավայրից ու դառնա այդ միջավայրը վերափոխող ակտիվ սուբյեկտ: Եթե մարդ շատ է կրում միջավայրի ազդեցությունը, գերի մնում նրա պայմանականություններին, ենթարկվում քարացած դոգմաներին, ընդունում մտածելակերպի, վարքագծի միօրինականացած, կոնֆորմիստական ձևեր, ապա դրանով նա կորցնում է իր անհատականությունը, թուլանում է նրա ներքին ակտիվությունը, նեղանում անհատական ընդունակությունների զարգացման շրջանակները:

Մարդու կյանքը, նրա անհատական կեցության բոլոր դրսևորումները առարկայական բնույթ ունեն, նույնիսկ այն դեպքում, երբ այդ առարկայական աշխարհի իմացության անհատական փորձով նրա մոտ ձևավորվում

<sup>5</sup> Տե՛ս А. Печев. Человеческие качества. М., 1985. էջ 43:

են գաղափարներ, իդեալներ, այնուամենայնիվ դրանք կոնկրետ իրողութիւններ են և անմասն չեն մնում նրա գոյութեան ուստի հարաբերութիւններին: Այդ հարաբերութիւնները իրենց մեջ են առնում մարդու անհատակա կեցութեան այն դրսևորումները, որոնք ներկայացնում են նրա տիպարանական յուրահատկութիւնները, անհատականութեան բնորոշ գծերը: Բարդ ու հակասական իրականութեան մեջ մարդու կողմնորոշումներում ուղենիշ են դառնում նրա կյանքի իմաստն արժեքավորող և իդեալը իր մեջ արտացոլող գաղափարները՝ իրենց աշխարհայացքային ու բարոյարժեքային գնահատումներով: Մարդն իր գոյութեան բնական և սոցիալական միջավայրում շատ արժեքների է առնչվում, բայց դրանցից նա ընտրում է այն, ինչը համապատասխանում է նրա էութեանը, պահանջմունքներին, շահերին, իդեալներին: Մարդու զարգացման նման ուղղվածութիւնը ապահովվում է նաև հասարակական դաստիարակութեան և ինքնադաստիարակութեան ողջ համակարգով, որը պետք է ներդաշնակութիւն հաստատի սոցիալական իդեալի պահանջմունքների և անձի անհատականութեան ձևավորման բնականոն ընթացքի հետ: Դրա հիման վրա անձի և հասարակութեան միջև ձևավորվում է փոխհարաբերութիւնների որոշակի համակարգ, որոնք առարկայանում և միջնորդավորվում են անձի սոցիալական կարգավիճակով, դերային ֆունկցիաներով և սոցիալական ինքնորոշման պահանջներով: Իր դերային ֆունկցիաներով, սոցիալական որոշակի կարգավիճակով անձը այստեղ ավելի շուտ հանդես է գալիս իբրև սոցիալական հանրութեան ֆունկցիոնալ կրող, քան սեփական «ես»-ի ինքնարտահայտող սուբյեկտ: Քանի որ անձի և հասարակութեան կապերն ու հարաբերութիւնները կանոնակարգված են սոցիալական, իրավական նորմերով, որոնք իրենց մեջ չեն կարող ներառել անհատական կյանքի բոլոր կողմերն ու դրսևորումները: Այս ոլորտից դուրս են մնում մարդու սեփական «ես»-ի ինքնարտահայտման այնպիսի երեւոյթներ, արժեքային այնպիսի կողմնորոշումներ, որոնք ձևավորվում են միջանձնային հարաբերութիւնների համակարգում՝ ներկայացնելով դրանց հակասականութիւնը, բարդութիւնը և միջնորդավորվածութիւնը: Այստեղ ավելի հստակ է արտահայտվում մարդու էութեան բազմաշափոթութեան՝ իբրև նամակարգ իր աշխարհայացքային, ինտելեկտուալ-մտածողական, զգայական, զգացմունքային, կամային դրսևորումներով: Սեփական «ես»-ի ըմբռնման, արժեքավորման այս մակարդակի վրա մարդ ընդհանրացնում է իր կյանքի փորձը, ճշտում իր արժեքային կողմնորոշումները, իր կյանքի իմաստի գնահատումները, զգում նաև իր գենետիկական և ֆունկցիոնալ կապը սոցիումի հետ: Մարդկային հարաբերութիւնների մեջ այսօր զարգացման երկու միտում է նկատվում. մի կողմից գնալով այդ հարաբերութիւնները դառնում են ավելի ուսցիոնալ ու հաշվենկատ, իսկ մյուս կողմից մարդիկ ավելի մեծ պահանջ են զգում համակեցութեան այնպիսի նորմերի, որոնք անմիջապէս առնչվում են հոգեկան միասնութեան, սիրո, ընկերութեան, բարեկամութեան, փոխադարձ հարգանքի ու պատասխանատվութեան հետ: Դրանք հասարակական և անձնական կյանքն իմաստավորող այնպիսի ատրիբուտներ են, որոնք ամբողջացնում և իրար են կապում մարդկանց հոգևոր, ներզգայական աշխարհի բոլոր դրսևորումները և դառնում կենսական եռանդի ու ոգևորութեան խթանիչներ:

Եթե մարդու ուստի կեցութեանը կախված է բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններից, ապա նրա անհատական կյանքը, նրա «ես»-ը իր վրա պետք է կրի այդ բազմազանութիւնը: Այս առնչութեամբ ավելի են կարևորվում մարդու անհատական կյանքի իմաստավորման բարոյա-արժեքային շափանիչները: Հիշենք Կանտի այն երեք հարցադրումը, որով նա

փորձեց տալ մարդու էության ընդհանուր բնութագիրը. ի՞նչ պետք է իմանա մարդը, ի՞նչ պետք է անի մարդը և ի՞նչի վրա հույս դնի մարդը: Դրանք արտահայտում են աշխարհի նկատմամբ մարդու ճանաչողական, գործնական, արժեքային հարաբերությունները, որոնք չեն կարող չեզոք լինել մարդու կյանքի, նրա վարքագծի բարոյա-արժեքային գնահատումներից: Դրա հետ մեկտեղ այսօր մարդու համար նոր իմաստ է ստանում նաև այն, թե ինչպես է նա ճանաչում աշխարհը, ինչպես է վերափոխում օբյեկտիվ իրականությունը, ինչպես պետք է ապրի և հանուն ինչի է ապրում: Սրանք հարցեր են, որոնց պատասխանելով մարդը փորձում է ճիշտ հասկանալ իր կյանքի իմաստը, իր բարոյա-արժեքային ըմբռնումներն ու պատկերացումները, իրավունքներն ու պարտականությունները: Այս ամենի մասին մարդն անընդհատ մտորում է: Բայց իրական կյանքն իր արագ փոփոխվող պայմաններով ավելի բարդ ու հակասական է, քան նրա մասին մարդու մոտ ձևավորված պատկերացումները, և դրանք չեն կարող չազդել մարդու կողմնորոշումների վրա: Բանն այն է, որ իրականում մարդու և նրա գոյության արտաքին աշխարհի միջև հաստատվում են ոչ միայն ներդաշնակ, այլև աններդաշնակ հարաբերություններ, ծագում հակասություններ, կոնֆլիկտներ: Ընդ որում, դրանք իրենց բնույթով կարող են փոխվել, բայց երբեք վերանալ չեն կարող, քանի որ այդ հակասությունները, անտիևմիասնները հենց մարդն է իր մեջ կրում: Ուրեմն մարդուն մշտապես ուղեկցում են երբեք չլուծվող, բայց կյանքի տարբեր փուլերում, տարբեր պայմաններում և իրավիճակներում կերպարանափոխվող հակադրություններ ու հակասություններ: Դրանք ծագում են մարդու կենսաբանականի ու սոցիալականի, բնականի ու զգայականի, իգեալի և իրականության, ազատության և անհրաժեշտության, անհատականի ու հասարակականի միջև և այլն:

Մարդկության զարգացման արդի փուլը բնութագրվում է հաղորդակցման, նյութական, հոգևոր, մշակութային արժեքների փոխանակման բարձր մակարդակով: Դա միաժամանակ արագացնում է կյանքի ռիթմը, ավելի միջնորդավորված և մակերեսային դարձնում անմիջական մարդկային շփումները, թուլացնում մարդկանց միավորող հոգևոր կապերը: Իր ընդհանուր ճակատագրով մարդկությունը միավորման մեծ պահանջ է զգում, և այսպես թե այնպես դա տեղի է ունենում, բայց դրա հետ միասին զուտ մարդկային իմաստով կյանքը դառնում է ավելի լարված, իսկ դա առաջ է բերում օտարվածություն, մենակության զգացում, մարդկանց մեկը մյուսից մեկուսանալու, անձնական կյանքի մեջ ամփոփվելու պահանջ:

Մարդկային գոյության տառապանքը, դրամատիզմը և լարվածությունը, իրավացիորեն նշում է Ն. Ա. Բերդյաևը, մեծապես կախված են մարդկանց փակվածությունից, օտարվածությունից, նրանց միավորող հոգևոր կապերի թուլությունից<sup>6</sup>: Իրոք իսկական մարդկային համերաշխություն ու փոխըմբռնում կարող է լինել, եթե մարդկությունը հաղթահարի այս երևույթները, ամրապնդի իր միասնությունը, ամենից առաջ հոգեկանության, բարոյականության հիմքի վրա: Մեկուսանալը թեև մարդու ներաշխարհի յուրահատուկ դրսևորումն է, բայց նրա կոշտը ավելի շատ իր նմանների հետ մերձենալու, հաղորդակցվելու մեջ է: Մարդկային էությունը բացահայտվում է միայն գործողության, հաղորդակցման մեջ, մարդ-մարդ հարաբերության մեջ, որը, ինչպես նշում է Ի. Ս. Կոնը, հենվում է միայն «ես»-ի և «դու»-ի միջև ունեցող գոյություն ունեցող տարբերության վրա<sup>7</sup>: Մարդկային այդ հա-

<sup>6</sup> Տե՛ս Н. А. Бердяев, Экзистенциальная диалектика божественного и человеческого // Мир философии, т. 2, М., 1991, էջ 49:

<sup>7</sup> Տե՛ս И. С. Кон, Открытие «Я». М., 1978, էջ 23:

ըարբերությունները, որոնք ընդգրկում են նրա կեցության բոլոր ոլորտները, հանդես են գալիս ավելի շատ որպես հոգևոր հարաբերություններ: Ցանկացած հարցի լուծում, ընդհանուր առմամբ տնտեսական թե սոցիալական, իր վերջնական արդյունքով արտահայտվում է մարդու հոգևոր պահանջմունքների մեջ, և վերջին հաշվով առաջ բերում նրա ներքին մարդկային հատկությունների կատարելագործման պահանջ: Կյանքի անանցողիկ արժեքները կապված են հենց հոգեկանության հետ, որը ապահովում է սերնդափոխության բնական ընթացքը, հոգևոր միասնություն ստեղծում անցյալի, ներկայի ու ապագայի միջև: Մարդու բարոյա-արժեքային կողմնորոշումները, կյանքի իմաստի ըմբռնումը տեղի է ունենում ավելի շուտ հոգեկանության շահանքներով: Մարդիկ տարբեր են իրենց արժեքային կողմնորոշումներով, իրենց արժեքներով, աշխարհըմբռնմամբ և այլն: Մեկը տրվում է իր եսապաշտական կրթերին ու շահերին, մյուսը իր կյանքն է զոհում հանուն հայրենիքի՝ իր մեջ կրելով իր ազգին, հասարակությանը, մարդկությանը ծառայելու վեհ իրենց: Եթե ամեն մեկը անտեսելով ընդհանուրի շահը, ձգտի միայն իր անձնական պահանջմունքների բավարարմանը, ապա մարդկությունը կկործանվի: Ամբողջը և այդ ամբողջը կազմող ամեն մի առանձին անհատ գոյատևում է այն բանի շնորհիվ, որ հանուն դրա կատարվում են զոհաբերություններ, գործադրվում ջանքեր՝ դրանց մեջ դնելով մարդկային կիրք ու զգացմունք:

Մարդկանց անհատական տարբերությունները ստեղծում են սոցիալական միջավայրի այն բազմազանությունը, որը առաջ է բերում մարդկային հաղորդակցման ու համագործակցության պահանջ, գործունեության արդյունքի փոխանակում: Ուրեմն մարդուն ճիշտ հասկանալու համար պետք է հետազոտել նրա ունեցած կեցությունը, ներքին և արտաքին կյանքի յուրահատկությունները՝ իրենց հակասություններով, որոնք իրենց ծագումնաբանական հիմքով բխում են մարդու և՛ սոցիալական, և՛ կենսաբանական էությունից: Այդ հակասությունները մարդու մոտ անշարժ, ստատիկ վիճակում չեն մնում, դրանք անընդհատ փոխվում և հաղթահարվում են: Դա հիմնականում կարող է տեղի ունենալ երկու ճանապարհով. մարդու վրա ներգործող նրա գոյության սոցիալական պայմանների փոփոխության շնորհիվ և ժառանգաբար փոխանցվող մարդու կենսաբանական-ծագումնաբանական այս կամ այն «թերություն» շեղոքացման, վերացման, այլ կերպ ասած, նրա կենսաբանական կատարելագործման ճանապարհով: Հայտնի է, որ կենդանիների մոտ կենսաբանական ժառանգական հատկությունները փոխանցվում են անմիջապես, ուղիղ գծով, մարդկանց մոտ դա տեղի է ունենում ավելի շատ միջնորդավորված ձևով, սերնդափոխության բնականոն կրկնվող պրոցեսում անընդհատ փոփոխվող սոցիալական պայմանների ազդեցություններով: Կյանքի էվոլյուցիան մարդուն հնարավորություն է տալիս օգտվելու այս երկու ուղիներից՝ ինքնակատարելագործվելու և իր համար նպատակաուղղված զարգացում ապահովելու համար:

Սոցիալական կյանքը խիստ հարաշարժ է, նրանում ոչ մի բան անշարժ, անփոփոխ չի մնում, այստեղ անընդհատ նորացման, հնի կործանման ու նորի առաջացման պրոցես է: Այս բոլոր փոփոխությունները իր վրա կրում է նաև մտաբան, փոխվում են նրա հայացքները, մտածելակերպը, ներաշխարհը, արժեքային կողմնորոշումները: Այդ փոփոխությունների շարժում, ընթացքը և ուղղվածությունը որոշվում են մարդու կեցության օբյեկտիվ անհրաժեշտության և նրա ազատության որոշակի հարաբերակցությամբ: Ընդ որում, մարդու համար բոլոր պարագաներում բացառվում է բացարձակ ազատության հնարավորությունը: Ազատությունը նաև սահմանափակում է ենթադրում:

Այս անընթացումը տեղին է նշել Գյոթեի հետևյալ միտքը, որ մեզ ազատ է դարձնում ոչ թե այն, որ մեզանից վերև ոչ մի բան չենք ընդունում, այլ հենց այն, որ մենք ընդունակ ենք և կարող ենք հարգել մեզանից վեր կանգնածին, որովհետև նման հարգանքը մեզ ինքներիս է վեհացնում, բարձրացնում: Մեր կոչումով ցույց ենք տալիս, որ մենք մեր մեջ կրում ենք այն, ինչը վեր է մեզանից, և արժանի ենք լինել նրան հավասար<sup>8</sup>:

Ուրեմն մարդու էութենական ուժերի իրացումը հասարակական-պատմական զարգացման օբյեկտիվ անհրաժեշտությունում և սուբյեկտիվ-անձնային ներքին պահանջմունքներով պայմանավորված մի հարաձուռն ընթացք է, որի շնորհիվ մարդը իբրև անձնավորություն լինելիության անվերջ պրոցեսսապրելով հաստատում է իր «ես»-ը, իր անհատականությունը:

**М. М. ХАЧАТРИАН — Соотношение социальных условий и личностных факторов в самореализации человека.**— В нынешних условиях динамичности социальных процессов, ускорения темпа жизни весьма актуальной становится проблема самореализации человека. Общественный прогресс, в конечном счете, определяется уровнем реализации потенциальных сил человека. Потребность в самореализации формируется на уровне индивидуального бытия, но в сущности имеет широкую общественную детерминацию. Она находится в генетической и функциональной связи с потребностями общества, возникает не в сфере чистого разума и созерцания, а в ходе практического освоения мира, общих условий бытия, благодаря чему происходят объективации и субъективации сущностных сил человека, в сфере межличностных отношений, где более четко выражается многомерность человеческой сущности.

<sup>8</sup> Տե՛ս «Мир философии», т. 2, էջ 196: